ՄԶՄԿ
ICHD
Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ԵՎՐԱԻՆՏԵԳՐՄԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋԱՐԿԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

19 Մայաթ Նովա, Երևան
Հեռ.՝ +37410 58-26-38, Ֆաքս՝ +37410 52-70-82, Էլ.փոստ՝ mail@ichd.org, Ինտերնետ էջ՝ www.ichd.org

«Ի՞նչ առավելություն կա եվրոպացի լինելու մեջ, որ ուզում ենք եվրոպացի դառնալ: Սա պարզապես բարդույթ է»: «Ես հայերին որպես եվրոպացիներ երբեք չեմ կարող պատկերացնել: Մենք ասիացի էլ չենք, ինչ-որ «ուրիշ» տեսակ ենք»: «Առանց ընտրելու արդեն Եվրոպա ենք դարձել: Մեզ չհարցրեցին էլ»: «Ի՞նչ է Եվրոպան: Հասարակությունը պետք է տեղեկանա Եվրոպայի մասին, այլապես այն մեր մոտ ընկալվում է որպես այլանդակությունների համախումբ»: «Եվրոպան մեզ կարգելի մեր ազգային ԽԱՇ-ն ուտել, քանի որ այն չի համապատասխանում եվրոչափանիշներին»:

Այս մտքերը եվրոինտեգրման ուղու մոլի հակառակորդի հրապարակախոսական հոդվածից չէ, որ մեջ ենք բերում: Սրանք ՀՀ հասարակ քաղաքացիների մտահոգություններն են, որ արտահայտվել են Ի-ջևանում, Եղեգնաձորում և Երևանում կազմակերպված հասարակական քննարկումների ժամանակ, որոնց մասնակցել են ամենատարբեր մասնագիտությունների ու տարիքի մոտ հազար մարդ: Հայաստանի զարգացման եվրոճանապարհի որդեգրման հարցում մեր հայրենակիցների դժգոհությունները թերևս հնարավոր է խմբավորել երեք հիմնական դիտարկումներում.

1. եվրաինտեգրման ուղին որդեգրվել է քաղաքականություն մշակողների կողմից, առանց համապատասխան հասարակական պահանջի,
2. հասարակությունն իրականում չի պատկերացնում, ինչ ասել է եվրաինտեգրման ուղի և ինչ է ինքը՝ Եվրոպան իրենից ներկայացնում,
3. շարժվելով զարգացման եվրոպական ուղով՝ մենք կկորցնենք մեր ազգային նկարագիրն ու մեր հայկական ավանդույթները:

Ինչ մատուցել ենք, այն էլ ունենք

Հասարակությունն այսօր Եվրոպայի մասին գիտի այնքան, որքան նրան մատուցվել է, մինչդեռ մատուցվել է չափազանց սուղ, իսկ երբեմն էլ խեղաթյուրված տեղեկատվություն: Խնդիրը հատկապես ընդգծվում է մարզերում: Հենց նույն էլիտայում մի զգալի հատված կա, որ շատ էլ չի տարբերում, թե ինչ է եվրոպական ուղին, սակայն իմիտացիա է անում, քանի որ դրա մասին խոսելը չափազանց մոդայիկ է դարձել:

Իսկ ինչպես է հրամցվում մեր հասարակությանը Եվրոպան և այն ճանապարհը, որը տանում է դեպի եվրաինտեգրում: Այստեղ մենք մի շարք սխալներ ենք գործել և շարունակում ենք գործել.

- Այն, ինչ մատուցվում է այսօր մեզ (մեր հանրությանը), ենթագիտակցորեն դրդում է եվրաինտեգրումը նույնացնել «Արևմուտքի» հետ ինտեգրման հետ: Դա, դեռևս լիովին չվերափոխված հասարակական ընկալման պայմաններում, կողմնորոշվելու երկվություն է առաջ բերում: Այստեղ ավելանում է նաև դեռևս ենթագիտակցության մեջ դեռևս բացասական իմիջով պահպանվող ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների ակտիվացման՝ անընդհատ հրամցվող իրողությունը, ինչն իր հերթին նույնպես չի մատուցվում կառույցի բուն էության ներկայացման ու ընկալելի դարձման աշխատանքների ներքո: Արդյունքում եվրաինտեգրումը դիտարկվում է «ճամբարից ճամբար» ցավոտ խաղի համատեքստում:

- Անընդհատ և ամենուր կարելի է լսել, կարդալ կամ բանավեճի մեջ ներքաշվել այն մասին, որ Ռուսաստանը շատ խանդոտ երկիր է. հենց շարժվեցինք դեպի Եվրոպա, ապտակելու է: Սա կարծես տիրապետող հանրային կարծիք է դառնում:
- Մինչև այժմ մենք չենք կարողացել բացատրել ու ընկալելի դարձնել, որ մենք առանց մեր ազգային դիմագծի Եվոպային պետք չենք, քանզի Եվրամիությունն ինքը ազգային պետությունների միություն է:
- Մենք պաշտոնապես հայտարարել ենք, որ եվրոպական ուղին Հայաստանն ընտրել է որպես իր զարգացման հիմնական ուղղություն, սակայն բուն գործընթացը կարծես ուշանում է կամ, համենայն դեպս, հանրության համար տեսանելի չէ: Սրանով մենք այլասերում ենք գաղափարն ու արժեքները:
- Ստեղծված սոցիալական իրավիճակում, շատ դեպքերում, մարդկանց ծանր կացության մեղքը բարդվում է իշխանությունների վրա, իսկ քանի որ «դեպի Եվրոպա» կարգախոսը հիմնականում, կամ մեծամասամբ, հնչում է հենց իշխանավորների շուրթերից, միանգամից հակառակ ռեակցիա է առաջանում:
- Եվ վերջապես, մենք չենք կարողացել ցայսօր բացատրել, որ եվրոպական ճանապարհը ապացուցված խաղի կանոնների ճանապարհն է, փորձված չափորոշիչների ու ներդաշնակ ուղենիշների ճանապարհը, վերջապես կարմիր լույսի տակով չանցնելու, գազավորված ջրի շիշը բացելուց ամբողջովին չքրջվելու և թունաքիմիկատ արտադրելուց տեխնիկական ջրերը գետը չլցնելու ճանապարհն է:

Conditio sine qua non[1]

«Առանց ժողովրդի պահանջի և համաժողովրդական աջակցության դատապարտված է բարեփոխումների ցանկացած ծրագիր»: Այս միտքը տարիներ շարունակ հնչել և հնչում է ամենաբարձր ամբիոններից և ամրագրվում պետական տարբեր ծրագրերում:

Այսօր, երբ Եվրոպական նոր հարևանության ծրագրի շրջանակներում Հայաստանը մտնում է Եվրամիության հետ բանակցությունների փուլ գործողությունների ծրագրի հաստատման համար, երբ Ազգային ծրագրի նախագիծն արդեն դրված է քննարկման, իսկ պաշտոնական հանդիպումների հարթության մեջ Եվրոպայի հետ համագործակցության խորացման գործընթացը նկատելիորեն առաջ է շարժվել, իրականում այնքան էլ պարզ չէ. *ո՞վ է այս ամենի պահանջատերը*:

Որ ուղին ճիշտ է ընտրված, և որ Եվրոպական նոր հարևանության ծրագրի շրջանակներում աշխատանքները ՀՀ կողմից էլ ավելի պետք է աշխուժանան ու առավել ուշադրության արժանանան, ակնհայտ է, սակայն ակնհայտ է նաև, որ վաղուց հասունացել է պահը հանրության հետ լուրջ ու համակարգված աշխատանքի, որպեսզի հնարավոր լինի հասնել այն բանին, որ ի դեմս մեր հասարակության ձևավորենք եվրաինտեգրման կարևորագույն գործընթացի համոզված հետևորդ և հզոր հենարան:

Համառոտագիրը մշակվել է ՄԶՄԿ 2005թ-ի հոկտեմբերի 14-ի «Տարածաշրջանային քաղաքականություն և աջակցության կոորդինացում» թեմայով քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Քննարկումը կազմակերպվել էր Մեծ Բրիտանիայի Միջազգային զարգացման դեպարտամենտի աջակցությամբ:

[1] Conditio sine qua non (լատ.)- անհրաժեշտ պայման, առանց որի հնարավոր չէ երևույթը